# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՍԵՐԳԵՅ ԲԱԴԱԼՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական հեռագիր է հղել Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր, կոմունիստական կուսակցության ղեկավար Սերգեյ Բադալյանի անսպասելի և անժամանակ մահվան առիթով՝ իր վշտակցությունը հայտնելով հանգուցյալի սգակիր հարազատներին ու մերձավորներին:

Հեռագրում մասնավորապես ասվում է. «Կարճատև իր կյանքը Սերգեյ Բադալյանն ապրեց որպես ազնիվ մտավորական՝ մտահոգ իր Հայրենիքի ու ժողովրդի ներկա հոգսերով, որպես կորովաշատ գործիչ՝ հանուն Հայաստանի բարգավաճման, մեր ժողովրդի բարօրության ու ապահով գալիքի»:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*